

ՀԱՅՆՐԻՒՆ ՀԱՅՆԵ ԵՎ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ.
ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ԱՇԽԱՐՀՈՒՆԿԱԼՈՒՄ

ՆԱԶԵԼԻ ՄԱՐԿԱՐՅԱՆ

Հանճարների ճակատագրերի մեջ, որքան էլ որ նրանք տարբեր ժամանակների ծնունդ լինեն և մյան անկրկնելի, հաճախ նկատվում են ուղղակի ընդհանրություններ:

1797 թ. Հսեհոսի շրջանի Դյուսելդորֆ քաղաքում, հրեա վաճառականի ընտանիքում ծնվեց գերմանացի ապագա մեծ պոետը՝ Հայնրիխ Հայնեն: Ուղիղ մեկ դար անց, 1897 թ. աշխարհի մեկ այլ անկյունում հինավուրց Կարսում, հայ վաճառականի ընտանիքում ծնվեց Հայ պոեզիայի պագաթներից մեկը՝ Եղիշե Չարենցը: Հայնրիխ Հայնեի սպրած ժամանակաշրջանը ինչ էր հակասություններով: Այն գաղափարներն ու հոսանքները, որոնք Հայնեի ժամանակ նոր էին և դանդաղ էին ստացվում վրեժով, հասունացան և «պառուզ ավելցին» մեկ դար անց՝ Եղիշե Չարենցի կյանքի կարճատև հատվածում:

Նախախորհրդային պրեթե ամբողջ գրաքննադատությունը Հ. Հայնեին ներկայացնում է որպես կոմունիզմի գաղափարախոս: Առհասարակ, ընդունված է Հայնեին կոչել սիրո և հեղափոխության երգիչ: Այդպես էր իրեն կոչում նաև ինքը բանաստեղծը: Սակայն ըստ էության ի՞նչ գաղափարի էր դավանում Հայնեն: Հայտնի է, որ նրա վրա մեծ ազդեցություն են ունեցել սեհուտալիզմի Սեն-Սիմոնի մեկնաբանությունը: Եվ հենց այդ սեհուտալիզմն է, որ կազմում է Հայնեի փիլիսոփայական աշխարհայացքի հիմնական կմախքը:

1830 թ. Զրանտիայում հուլիսյան հեղափոխությունը հաջորդած սարիների հասարակության դարպասման ընթացքը խոր հիասթափություն պատճառեց Հայնեին: Բուրժուասահմանադրական իրավահարգը, ժողովրդական զանգվածների ճնշումն ու մոլորեցումը, բուրժուազիայի մտավոր անկումը և կապիտալիզմի վնասները ազդեցություն արվեստի վրա աստիճանաբար պրկեցին Հայնեին նրա պատրանքներից: Այլ բան էր նրա սպասածը, այլ բան՝ կատարվածն իր արդյունքով: Նա գրում էր. «Մենք պահանջում ենք նյութական բարեկեցություն, ժողովուրդների նյութական երջանկություն ոչ այն պատճառով, որ մենք մատերիալիստների նման արհամարհում ենք ոգին, այլ որովհետև մարդուս աստվածայնությունն արտահայտվում է նաև նրա մարմնական երեւոյթներում, և որ կարիքը կործանում և ստորացնում է մարմինը՝ կերպարն աստծո, իսկ դրա հետևանքով կործանվում է ոգին: Մենք պայքարում ենք ոչ թե հանուն ժողովրդի մարդկային իրավունքների, այլ մարդկանց աստվածային իրավունքների: Մենք չենք կամենում լինել սանկյուլորտներ, չափավոր բուրժուաներ, էժանագին պրեզիդենտներ: Դուք պահանջում եք հասարակ

զգեստներ, ժուժկալ բարքեր և անհամ վայելքներ, իսկ մենք ահա սլահան-ջուժ ենք նեկտար և ամբրոս, ծիրանապուլյն քղամիրդներ, թանկարժեք անուշաբույրներ, խնդություն և շքեղություն, ժպտուն հավերժահարսերի սլար, նվազ և կատակերգություն»¹: Հայնեն, իբրև ընդգծված անհատապաշտ, ժխտում էր բացարձակ հավասարությունը: Սպարտայի պետական կոռուցվածքը սլատկերանում էր նրան իբրև «հայրենասիրության մեծ ու տաղտկալի գործարան, հանրասլեական առաքինության զորանոց, հավասարության վեհորեն-անսլետք խոհանոց, որտեղ ապուրն այնքան վատ էր պատրաստվում, որ ատտիկական սրախոսները սլնդում էին, թե սպարտացիները այդ պատճառով արհամարհում էին կյանքը և հերոսաբար մահ էին սլնարում կուլի մեջ»²: Հայնեն ոչ սլակաս վճուականությամբ և նույն-սլիսի հեղանքով է արտահայտվել Լուի Բլանի հավասարիչ սոցիալիզմի առթիվ:

Դեռևս 1830-ական թվականներին Հայնեն հասկացավ, որ սոցիալիստական ուսմունքը և իրական բանվորական շարժումը կտրված են իրարից: Սակայն միացումն անխուսափելի է: 1843 թվականի իր հոդվածներում սեն-սլմոնիստների և ֆրանսիական կոմունիստների մասին նա ասում է, որ երբ տեսությունն ու սլրակտիկան միաճուլվեն, իսկ դա անխուսափելիորեն լինելու է, այն ժամանակ սլրոլետարիատը կհաղթանակի: Սակայն Հայնեն վախենում էր այդ հաղթանակից: 'Իրա անխուսափելիությունը պարզ էր նրա համար, և միաժամանակ նա սարսափում էր «խոհանոցային հավասարությունից», որին հետևելու էր պոեզիայի և արվեստի կործանումը: «Լուտեցիայի»³ առաջաբանում Հայնեն շարադրում է իր անթաքույց երկյուղը կոմունիզմից. «Իրոք, լուկ ահուղողով եմ մտածում այն ժամանակի մասին, երբ այդ մուայլ իշխանությանը կհասնեն, իրենց կոպիտ ձեռքերով նրանք անխնա կփշրեն գեղեցկության բոլոր մարմարե արձանները, ո-

1 Յ. Շ ի լ լ Ե ր. Պատմություն արևմտա-եվրոպական նոր շրջանի գրականության. Երևան, 1937, էջ 557:

2 Նույն տեղում, էջ 558:

3 Հ. Հայնեի «Լուտեցիա» գիրքը մի յուրօրինակ ժողովածու է, որի մեջ ամփոփված են 1840-43 թթ. Աուգսբուրգյան «Համընդհանուր լրագրում» լույս տեսած շուրջ 60 ակնարկներ: «Լուտեցիա»-ն Փարիզի հին անունն է, Փարիզի, որը Հայնեն ներկայացնում է գեղեցկուհու կերպարանքով: «Լուտեցիայում» Հայնեն նուրբ հումորով և կծու ծագրով վեր է հանում 1840-ական թվականների փարիզյան հասարակության քաղաքական վարքն ու սոցիալական բարքերը: Բանաստեղծն անխնա մերկացնում է ֆրանսիական կառավարության պարագլուխներին՝ Տիերի և Գիլոյի իսկական էությունը: Հայնեն սլոակադեմ է անում ֆրանսիական բուրժուական գեմոկրատիան՝ իր ընտրական սլսասեմով: Դեսլոտտաների պալատական ընտրությունները նա համեմատում է ձիարշավի հետ, որտեղ ամեն ինչ վճուում է մի խումբ գրագ բուող գործարար ստահակների շահերը, որոնց կարծիքով լավագույն և աղնվագարմ նժույգներն իրենց տեղը պետք է զիջեն հատուկ վարժեցված լղպոր յարուներին, սրանց է պատկանում առաջնությունը: Կառավարության կաղմերի փոփոխությունը Հայնեի բնորոշմամբ ոչ այլ ինչ է, եթե ոչ պարղասլես միմյանց հաջորդող մի նիտրներին հերթախոխ, որոնցից յուրաքանչյուրը քաղ իմանալով, որ ինքը երկար էի մնալու իր պաշտոնում, առաջին հերթին ձեռնամուխ է լինում իր գրպանը լցնելու և անձնական շահերի պահանջը հագեցնելուց հետո հաղիվ ուղում է անցնել իր պարտականությունների կատարմանը: Երբ փոխվում է կարիները, նոր միսիստները նախորդների նման գործն սկսում են սկղրից: Ակնարկում, ֆրանսիական հասարակության խավերին քննադատելու հետ մեկտեղ, Հայնեն խոր համակրանքով էր խոսում հասարակության ստորին ատիճաններին կանգնածների մասին, ջերմորեն սլաշտպանում նրանց, իր արտահայտությամբ, աստվածային իրավունքները: «Լուտեցիան» հայերեն էի թարգմանվել. 1977 թ. թարգմանվել է միայն գրքի առաջաբանը և սլլագրվել «Սովետական հայաստան» ամսսգրի 3-րդ համարում (թարգմանիչ՝ Ա. Մուշեղյան):

րոնք այնքան հարադատ են իմ սրտին, նրանք կխորտակեն արվեստի այն բոլոր երևակայական խաղալիքները, որ այդքան սիրում է սրտեր:

Նրանք կկտրեն իմ դափնինների սլակները և այդտեղ էլ գետնախնձոր կտնկեն, շուշաններ, որոնք չեն գբաղվել ո՛չ մանելով, ո՛չ գործելով և հագնված են եղել այնքան շքեղ, ինչպես Սողոմոն թագավորն իր ամբողջ փայլով, կիսվեն հասարակությունից, եթե միայն ձեռք չվերցնեն իլիկը. փարդերը, սոխակների այդ սլարապ սիրուհիները, կարծանանան նույն բախտին. սոխակները, այդ անօգուտ երգիչները կվռնդվեն և, ավաղ, իմ «Երգերի գրքին» թերթից նստարավաճառը տուրակներ կստատաստի՝ նրանց մեջ սուրճ կամ ասպաղյի պառավների համար քթախոտ լցնելու համար: Ես կանխադրում եմ այս ամենը, և մի անասելի վիշա է սլատում ինձ, երբ մտածում եմ այն կործանման մասին, որ հաղթական պրոլետարիատը սպասնում է իմ բանաստեղծություններին, որոնք գերեզման կմտնեն ամբողջ ոռոմանտիկ հին աշխարհի հետ»: Եվ հակառակ դրան, Հայնեն միաժամանակ խոստովանում է. «Հենց այդ կոմունիզմը, որն այդ աստիճանի հակառակ է իմ հակումներին, շահադրդուլություններին, իմ հոգու վրա դյուրթական աղբեցություն է գործում, որից ես անկարող եմ ապաստվել»:

Դարանցումը Հայերի համար դարձավ ողբերգական ծանր կորուստների շղթա. 1890-ական թվականներից սկսած ողբերգական կոտորածներ, Առաջին համաշխարհային պատերազմ, եղեռն, գաղթ, ավեր, թալան, կոտորածից մազապուրծ թշվառ ժողովուրդ: Դանթեական դժոխքի կես ճանապարհին հայ ժողովրդի փրկված բեկորներին և նորածիլ մտավորականությունը ոչինչ չէր մնում, քան դեմքը դարձնել դեպի Հյուսիս և հավատալ, որ վերջապես մեկը մեկնել է փրկության ձեռք, և որ այսուհետև գրվելու է նոր կյանքի սկիզբը:

Ահա հենց այդ ալեկոծ ժամանակը համընկավ Ե. Չարենցի կյանքի ողբերգական ժամանակահատվածին: Դեռևս պատանի՝ Չարենցը մասնակցեց Առաջին համաշխարհային պատերազմին, ականատես եղավ իր ժողովրդի անօրինակ ողբերգությունը: Այս ամենից հետո թերևս միայն նա կարող էր ամենայն խորությունը դգալ դաղափարական թոխչքի բարձրությունն ու տառապանքի անհունությունը: Հոգեկան և մտավոր հասունացման այս շրջանում Չարենցն իր համար բացահայտեց Հայնեին:

Հ. Հայնե – Ե. Չարենց կապը ստեղծադործական աղբեցությունների խնդիրներ, թերես, չունի, երկուսն էլ շատ ինքնատիպ են և յուրօրինակ: Չնայած երկուսի մոտ էլ առկա են նույնատիպ մոտիվներ՝ երազ, մահվան տեսիլ, ասպետական սեր, ոռոմաններ և վերջապես էպիգրամներ և երգիծական բանաստեղծություններ:

Չարենցի կյանքում Հայնեն վաղ է հայտնվել: Դեռևս պատանի՝ Չարենցն ընթերցել էր համաշխարհային գրական մեծություններին՝ Իբսեն, Հաուսման, Մետերլինկ, Համսուն, Ուալդ, Բոդլեր, Վերլեն, Հայնե: Նրա անձնական գրադարանում պահպանվել են Ս. Պետերբուրգի «Akademia» հրատարակությամբ տարբեր տարիների լույս տեսած (1928, 1931, 1934) Հ.

4 H. H e i n e. Samtliche Schriften. Munchen. B. 5, 1997, S. 233.

5 Նույն տեղում:

Հայնեի բանաստեղծությունների ժողովածուները, ինչպես նաև 1935 թ. լույս տեսած հայերեն «Երգերի գիրքը»:

1923 թ., թերևս անտեղյակ Վ. Տերյանի թարգմանությունը, Չարենցը բնագրից թարգմանում է Հայնեի հայանի «Շլեզվիլի ջուլհակները» բանաստեղծությունը: Չարենցի թարգմանությունը, սրահայանելով բանաստեղծության գլխավոր միտքը, բավականին հեռացած է բնագրից, սակայն նրա նպատակը եղել է ոչ այնքան բնագրին հարադատ մնալը, որքան ընթերցողին փոխանցել հին աշխարհի դեմ բողոքը, հեղափոխական արամադրությունները:

1920-ական թվականներին Հայնեի բանաստեղծությունները կոմունիստական դադափարախոսություն համակիրների ու կրողների կողմից ընկալվում էին որպես հեղափոխական ընդլիզման արտահայտություն: Որպես հիմք նրանք ընդունում էին Հայնեի մտերմությունը Կ. Մարքսի հետ և XIX դ. 10-ական թվականներին հեղափոխական պոեզիայի ծաղկումը, որին ակտիվորեն մասնակցում էր նաև Հայնեն իր ըմբոստ բանաստեղծություններով:

Տասը տարի անց, արդեն Չարենցը Հայնեին ընկալում էր բողոքովին այլ տեսանկյունից: Իսկ մինչև այդ ...

1920-ական թվականներից սկսած շրջանառության մեջ մտան գրականության նոր չափանիշներ և սրահայաններ⁶: Նոր պրոլետարականության հիմքերն ամրապնդելու, դասական գրականության և արվեստի ժառանգությունը ժխտելու նպատակով, հատկապես գրականության մեջ ներմուծվեցին ագիտացիոն տարրեր: Այդ նպատակով մշակվեց բարձր գրական ոճի մերժում, պոեզիա էր ներխուժում առօրյա խոսակցական լեզուն: Գրականությունը հեղեղվեց մետաղական ձայնարկություններով, պլինձը, չուգունը, երկաթը դարձան բանաստեղծների ներշնչանքի և մեծարանքի առարկա: Ավելի ու ավելի հաճախ էին հնչում կոչ-սրահայանները. «Բանվորականացնենք պրոլետարական կազմակերպությունները: Լայն ճամփա բանվոր հարվածայիններին դեպի գրականության գիրքերը: Գրականությունը ծառայեցնել հնգամյակի հաղթական իրականացման և սոցիալիզմի կառուցման կարիքներին: Տիրապետենք տեխնիկայի գրական ֆրոնտում»:

Հ. Հայնեն ժամանակին կանխատեսելով դալիքը՝ գրում է. «Դեմոկրատիայի ակրապետությունը բերում է իր հետ գրականության վախճան, ոճի ազատություն և հավասարություն: Յուրաքանչյուրին թույլ է տրվելու գրելու իր հայեցողությամբ, ընդամին այնքան, որքան նրան հաճելի է, և սակայն ուրիշ ոչ ոք իրավունք չունի որակական տեսանկյունից նրանից բարձր կանգնելու և նրանից լավ գրելու»⁷: Այն ժամանակ Հայնեն, — ինչպես քանիցս խոստովանել է, — ցանկություն ուներ հեռանալ քաղաքական պոեզիայից, հասարակական կյանքից, որը նրա մեջ վաղուց դարչանք էր առաջացնում. «Այնպիսի ժամանակ, երբ գերակշռում են քաղաքական շա-

6 Ե. Չարենցի կյանքի այդ ժամանակահատվածը մանրամասն քննություն է տունված Դ. Խասպարյանի «Ողբերգական Չարենցը» գրքում (Երևան, 1987):

7 Նույն տեղում:

8 Ֆ. Շ ի լ լ և ր. նշվ. աշխ., էջ 564:

Հերր, շատ Հաղվադեպ կարող է երևան դալ դուա գեղարվեստական երկ: Պոետան այդպիսի ժամանակ նման է ալեկոծ ծովն ընկած մի լողորդի, որը Հետափոր ափի մի ժայռի վրա վանք է տեսնում: Սպիտակաղգեստ կույսերն են երգում այդ վանքում, սակայն փոթորիկի ունոցը խլացնում է նրանց երգեցողությունը»⁹:

Այս երևույթը բնորոշ էր նաև XX դ. 20–30-ական թվականների համար: Ստեղծված այդ կացութայն մեջ Չարենցը ի վերուստ կոչված բանաստեղծ, «ժամանակի շավղից դուրս էր սայթաքում», գրում էր «Երգ մաքաուու-մին»: Դա երգ էր իր ընտրյալի ուղու մասին: Չարենցի այդ երգը հիշեցնում է Հայ ժողովրդական Հայտնի Հեքիաթներից մեկում Հաղարան բլբուլի Հեռեից դնացող ընտրյալ Հերոսի անցնելիք ճանապարհը մինչև իր վերջնական նպատակին՝ Հաղարան բլբուլին հասնելը: Դեպի «անհաս բարձունքները» աստուղ ճանապարհը նա տեսնում և ղգում էր որոշակիորեն, և որքան էլ այդ ուղին խորհուրդ էր, իսկ վերելքը տքնաջան, նա այդ ընթացքը նկարագրում է խինդով: Չէ՞ որ միայն իրեն և իր նմաններին է վերապահված զգալ «բարձունքի ցնորքն անձայրածիր», և «անհաս գագաթներին» գազաթնային երգեր երգել:

Չգվում է ահա քո դեմ ուղիդ
Դեպի նոր, անհաս բարձրություններ,
Եվ դգվում է քեզ բույրը հողի
Եվ գազաթների շունչը ձյունե.
Եվ մենակ ես դու կրկին ահա,
Եվ գարերն են քո շուրջը երգում,
Եվ արեգակն է, որպես վահան,
Բարձրանում քո նոր այս եղերքում:

.....
Օ, վերջին անգամ խնդուն երգով
Թոթափի՛ր հողիդ ու բարձրացի՛ր,
Ժպիտով անհուն նայիր ներքե՝
Դաշտերում ծագող լուսաբացին, —
Ու քայլի՛ր անդուլ, քայլի՛ր կրկին,
Թող նորի՛ց հոգիդ արյունոտի,
Բայց ճահիճների ճղճիմ երգին
Թող երբե՛ք, երբե՛ք չկարոտի¹⁰:

Բանաստեղծական այս անօրինակ թռիչքից հետո այնտեղ՝ ցածում, շրջակա «ճահիճը» և «ճահճապանները» շարունակում էին սլարտագրել իրենց ոճն ու ճաշակը, ստեղծագործական վերընթաց սլացքի մեջ նրան ևս ներքաշել իրենց ստորին ոլորաները:

Հայնեն գրում է. «Դեմոկրատիան ատում է սրեղիան: Պառնասը պետք է քանդել, հողին հավասարեցնել և ապա սալահատակել: Եվ այնտեղ, ուր մի ժամանակ բլբուլից բլբուր էր բարձրանում ժրաջան սրեսոր՝ ունկնդրելով սոխակի երգին, այնտեղ շուտով կառուցվելու է մի հարթ, բանուկ ճանապարհ: Այնտեղ գրվելու են սելսեր, որոնց վրա վերջանալու է շոգեկառքը՝

⁹ Նույն տեղում:

¹⁰ Ե. Չ ա ր և ն ց. Երկերի ժողովածու. հ. 2, Երևան, 1986, էջ 260:

սուբալյով մշտասլես իր գործով դեղաված հասարակության կողքից»¹¹: Ահա վառ օրինակ ի հաստատումն հայնեական կանխատեսումների:

Թքել եմ և ինչ որ բարձրունքներին հեռու,
Որոնց երգն է երգում վհատ մի մարդ.
Բարձրունքը մեղ համար մեր սլարիսսլն է եռուն,
Գործարաններ ու հանք, կոլխոդ ու արտ:
... Գրիչս քեղ լինի բոլշևիկյան արվեստ՝
Միշտ անզիջում լինես և անթերի,
... Եվ բրիգադիր լինես մեր հանգերին:
Իմ կոլխոզնիկ ընկեր, տրակտորը քեղ գերի,
Տիրի՛ դու նրան, շոյիր և ճանաչիր՝...,-

գրում է Աղատ Վշատունին թքակոծելով Չարենցի բարձրունքները: Իսկ Չարենցը: Նրա հոգին դյուրթված էր կոմունիզմով: Մի կողմից նվիրական դադափարը, որը նաև հայ ժողովրդի փրկության միակ հույսն ու դուռն էր, մյուս կողմից մեծ գեղագետի և բանաստեղծի բնազգացությունը նրան դրել էին երկընտրանքի մեջ: Առաջինը պահանջում էր սառը տրամաբանություն, և Չարենցը, գնալով զիջումների Բանաստեղծի հետ, գրում է:¹²

Թե ուղում ես երդդ լսեն՝
Ժամանակիդ շո՛ւնչը դարձիր...¹³

Իր զիջումների ճանապարհին Չարենցը նույնպես մոլորվեց և հիմանդացավ «ձախությամբ»: Այդ անցումը ցավագին էր: Նրա այդ շրջանի ստեղծագործությունների մեջ զգայվում է բուճադբուճություն, ինչ-որ ներքին ընդվզում, բողոք՝ քարացած տողերի ենթատեքստում: Վառ օրինակ է «Ռոմանս անսերը», որն ընթերցելիս բարձրացնում է ներքին լարումը, որը մարդուն դուրս է բերում հավասարակշռությունից, մղում ավելի կտրուկ, երբեմն գոհիկ արտահայտությունների: Այդ սլոեմն իր մեջ կրում է Չարենցի պահի էներգիան, որով գրվել է, և այն ակամա փոխանցվում է ընթերցողին: «Ռոմանս անսերը» բանաստեղծի ներքին ընդվզումն է ընդդեմ պարտադրված ճաշակի, դժվարագույն ճիգ, որը պահանջում է ինքնառնչացում, սրբությունների ոտնահարում:

Բերենք ևս մի հատված Հայնեի կանխատեսությունից. «Դեմոկրատիան կատարում է բոլոր նրանց վրա, ովքեր սեր են երգում... Ինչ հարկ կավարդ երգելու, արիստոկրատ: Երգի՛ր դեմոկրատական կարտոֆիլ, որ ժողովուրդ է սնում»¹⁴:

¹¹ Պ. Շ ի լ լ ե թ. Նշվ. աշխ., էջ 561:

¹² «Գրական թերթ», 27 հունիսի 1930:

¹³ Իր ժամանակին Հայնեն ևս ունեցել է այդ երկվությունը: Նա գրում է. «Իմ կրճքում հնչում է երկու ձայն, որոնք թույլ չեն տալիս ինձ լռեցնել իրենց: Նրանք զիվական աղվեսություն ունեն ինձ վրա: Սակայն ես կախարդված եմ դրանցով և չեմ կարող հաղթահարել, քանի որ այդ ձայներից մեկը արամաբանությունն է: Դանթեն ասում էր, որ սատանան արամաբան է. դա մի սարսափելի սիլլոգիզմ է, որը դյուրթել է ինձ ու չեմ կարող հակասակվել այդ նախադրյալին» (H. H e i n e. Նշվ. աշխ., էջ 234, թարգմ. Ն. Մարգարյան):

¹⁴ Ե. Չ ա ռ ե ն ց. Եժ. Հ. 2, էջ 266:

¹⁵ H. H e i n e. Նշվ. աշխ., էջ 234:

Մե՛ր,
 էսօր
 բերել եմ քեզ—մահ
 Ես — հունն:
 Հուշդե՛ր են. թող գա՛ն, եթե կան.
 բռնեմ —
 շարտեմ դեն.
 Մոսկովից մինչև Վատիկա՛ն.
 Թող հորդեն — դե՛¹⁶:

Եվ Չարենցը պետք է սպաններ բանաստեղծին, որպեսզի ծնվեր մի նոր՝ սլահանդիված Չարենց: Հայնեն գրում է, որ կոմունիզմի տիրապետության օրոք այլևս անիմաստ կլինի սեր և վարդ երգելը, իսկ բանաստեղծական ոգևորությունները կարող են նվիրվել միայն «գեմոկրատական կարտոֆիլին»¹⁷:

Չարենցի ժամանակ՝ 20-ական թվականների երկրորդ կեսին, այդ սերը վերապահվեց մետաղների բոլոր տեսակներին: Եվ սակայն նրան չէր լքում բանաստեղծը: Ավելի ուշ՝ 1930 թ., «Մուսայիս» բանաստեղծության մեջ նա պիտի գրեր.

Իմ ե՛րգ, իմ քնա՛ր, օրերի միգում
 Ինձ անդարձ արված արևոտ մի կին,—
 Դու անկեղծ էիր ինձ հետ ինչպես քույր,
 Դու պայծառ էիր ու անչափ մաքուր—
 Թքեցի սակայն ես մի օր դեմքիդ...

Դավաճանեցի մի գիշեր ես քեզ,
 Ուղեցի ընտրել սիրուհի մի սառ,
 Որ ինձ երկաթե երազներ երգեր
 Եվ առանց սիրո ու առանց կրքի
 Տաներ ինձ մի նոր, երկաթե աշխարհ¹⁸:

Չարենցը գիտակցում էր, որ հնարավոր չէ ընդգրիմանալ. նա գրում է պալսով, զղումով և կարծես բացատրություն տալիս.

Իմ օրերում ցանկացա լինել հպարտ ու ինքնուրույն,
 Իմ օրերում ցանկացա կյանքս զոհել դրա սիրուն:

.....
 Իմ օրերում շատ էր դժվար երգը կյանքի համար դրված,—
 Յուրաքանչյուր բառ կամ թռիչք էր վեհ կամ մութ արկած¹⁹:

Չարենցը չափազանց բարձր էր, որպեսզի տևականորեն ենթարկվեր անցողիկ արժեքների և մոլորությունների ազդեցության: Ինչպես և սպասելի էր, այդ պայքարում Չարենցի մեջ հազիբեց բանաստեղծը և մեծ գեղարվեստը: «Մուսայիս» բանաստեղծության մեջ նա խոստովանում է.

16 Ե. Չ ա ռ Ե ն ց. ԵԺ. Հ. 2, էջ 52:

17 Ֆ. Շ ի լ լ Ե Ր. Նշվ. տշխ., էջ 561:

18 Նույն տեղում, էջ 255:

19 Ե. Չ ա ռ Ե ն ց. ԵԺ. Հ. 3, 1987, էջ 365:

Քո պայծառ, մաքուր շունչը կենդանի
 Ուզեցի փոխել ես բետոնի հետ,
 Միրոս դարձնել պողպատե անիվ,
 Երես դարձնել անդարձ քեզանից
 Եվ դառնալ անկիրք աշխարհի պոետ:—
 Երեխայական մի լսանդաղանքով
 Ես իր՛ն ընտրեցի իբրև հարսնացու,
 Եվ երգս դարձավ անուժ ու անթով,
 Եվ մոլորվեցի իրերի բանտում,
 Եվ գլխիս իջավ մառախուղը ցուրտ²⁰:

Մի թռչնի քարեցը բարձրացավ ժամանակի պարտադրանքից և դարձավ հայ դասական դրականության և նոր գրականության կապող օղակը: Այդ վերընթաց սլացքը նա ասլրեց իր կյանքի վերջին տասնամյակում, և դրանում իր մեծ դերն ունեւր Հ. Հայնեն: Վերջինս իր հարյուրամյա հեռվից զգուշացնում է իր հոգեորդուն՝ զգուշ մնալ արգեն «կարմիր հագած» ֆիլիստերներից, չէ՛ որ իր տառապանքը փորձ ունեւր, այդ նույն ֆիլիստերներն էին, որ այնպես թունավորում էին այն միջավայրը, որտեղ ապրում և ստեղծագործում էր գերմանացի պոետը: Նրանք էին, որ իշխանության գլուխ էին դալիս բարձր գաղափարների անունից և այնուհետև գլխատում այդ գաղափարները: Նրանք էին, որ սպառնում էին աճել, դառնալ երևույթ և տիրել միջավայրին, իրենց ծանր ու վիշտալից ախորժուկով խժուել ու ոչնչացնել առաջադիմականն ու լուսավորը և շուրջը համատարած գորշություն և ապականություն սփռել: Այդ նրանց մասին էր սարսափով գրում Հայնեն.

Այսանդ արնաքամ կլինեմ իսպառ
 Տվեք ինձ մի դաշտ անապակ հեռվում
 Խեղդվում եմ, խեղդվում ճահճում այս խափար,
 Այս չարիքների հեղձուկ աշխարհում²¹:

Այս բանաստեղծությունը վերնագրված է այսպես «N:N:1829»: Ուղիղ մեկ գար անց և միևնույն ժամանակ իր կյանքի հերթական ճգնաժամն էր ապրում Ջարենցը: Նույն 1929 թվականին նա գրում է երկու բանաստեղծություն. «Նմանություն Հայնենին» և «Անվերնագիր» (Հայնենյան մոտիվ): Հայնեն՝ որպես հոգեհարազատ բանաստեղծ, ավելի խորն էր նստած Ջարենցի հոգում, քան կարելի էր ենթադրել: 1928 թ. նա գրում է մի բանաստեղծություն, հոգեկան անտեսանելի կապը բացահայտող մի նկար, որից կարելի է պակասերացում ստանալ բանաստեղծի ներաշխարհի պատկերապատկերի մասին: Օտար աչքի համար անտեսանելի նրա զգայական ողջ աշխարհն ընդամենը սասը տողի մեջ բացում է վարմանակի տեսարաններ ու դեմքեր: Դեմքեր, որոնց հոգիներին նա առնչվում է տիեզերական ոլորտներում և ունենում է ներքին հաղորդակցման պահեր.

Ես վախենում եմ որպես նեկրոման, կես- գիշերային ժամից,
 Երբ ելնում է լուսինը դադաղից ու մեռնում է անգամ քամին:

20 Ե. Ջարենց. Եժ. հ. 2, 1986, էջ 256:

21 Հ. Հայնեն. Երկեր. հ. 1, Երևան, 1958, էջ 280:

Այդ ժամին, թե արթուն եմ լինում, գգում եմ սարսափով,
 Որ ահա կգա Բողոքերը, կերևա էդգար Պոն:
 Մերունի վերջերը կգա ու ֆավնի ճայնով երգեցիկ
 Մերդե աշուն, թախիծ, գիշերվա լապաներ, ակացի:
 Եվ գեմը խշշացող բարդին, կթվա կրկին թե Հայնեն է—
 Եվ յուսինը կրկին վերեսում կթերթե իմ տխուր «Ռուբայները»...²²

Չարենցը հայտնաբերվելու էր աշխարհի հին ու նոր ժամանակների գրական հսկաների ստեղծագործություններին, միաժամանակ ներքին սերտ կապ առաջադնելով այս կամ այն մեծություն հետ (Կոմիտաս, Գյոթե, Պուշկին), որոնց հետ նա զրուցում էր, նրանց հետ կիսելով իր մտորումները: Այսպիսի մի պահի գրվել է նաև «Heinrich Heine»-ն:

Հայտնի է, որ 1933 թ. շատ բեղմնավոր եղավ Չարենցի գրչի համար: Հունվար ամսից մինչև հունիս ընկած ժամանակամիջոցում նա գրեց «Պատմության քառուղիներով», «Նորք», «Դեպի լյառն Մասիս» պոեմները և ապրիլի մեծ մասը: Այդ նույն ժամանակ նա գրել է «Մահվան տեսիլը» և Հ. Հայնեին նվիրված «Heinrich Heine» և «Հայնեին» բանաստեղծությունները: 1933 թ., Հայնեի հայրենիքում իշխանության գլուխ անցան «մոթ ու ժեր» հաստատվեց ֆաշիստական ռեժիմ: Հ. Հայնեի մահվանից ուղիղ 80 տարի անց, նրան չնեղվեցին գերմանական ֆիլիստերների թիկունքին հասցրած նրա մտրակի հարվածները, որոնք ընդմիջտ մնացին նրանց հիշողության մեջ: Ֆաշիստական իշխանությունը չհանդուրժեց նրա գոյությունը, ոչնչացնում էին պոետի ոչ բազմաբանակ արձանները, որ կանգնած էին Գերմանիայում, այրում էին նրա երկերը: Այդ նույն ժամանակ նրա ստորագրությունները ջնջում էին բանաստեղծությունների վրայից, ամբողջ աշխարհին հայտնի «Լորելայ» երգի տակ բացահայտ ցինիզմով գրում էին «Անհայտ հեղինակի գործ», մինչդեռ հեռավոր Հայաստանում նախրցի մի պոետ ձոն էր դրում առ Հայնե:

Ստեղծագործական վերելքի պահին Չարենցը դիմում է Հայնեին, որպես մի մտերմի, հարազատի, նրա հետ կիսում իր տաղանդներն ու մտահոգությունները: Վերախմաստավորման պահին, երբ Հայնեն օգնեց պատուել գյուլթիչ դադափարների կախարհական քողը, Չարենցն այդ բոլորից սկսած իրեն շրջապատող իրերն ու երևույթները սկսեց տեսնել նոր լույսի տակ, վրա հասավ պայծառատեսություն պահը և Չարենցն իր համար բացահայտեց մի նոր իրողություն: Ծնվեց «Գիրք ճանապարհին»:

Չարենցը «Heinrich Heine» բանաստեղծության 102 տողերի մեջ տալիս է իր սրտառական հոգու անցած ճանապարհը, ներքին դրաման, զուգահեռ անցկացնում իրեն այնքան հարազատ դարձած գերմանացի պոետի կյանքի անցած ուղուն, նրա պայքարի ճանապարհին: Չարենցը գրում է.

Ես սիրում եմ քեզ, Հայնրիխ Հայնե
 Դու մոտիկ ես ինձ չափազանց,
 Երգերիդ միջից քո ձայնը
 Հնչում է ինձ հար հարազատ:

22 Ե. Չ ա Ր Ե Ն Ե. Ե Ւ Ֆ. Հ. 2, էջ 345:

Դու մոտիկ ես ինձ, Հայնրիխ Հայնե
 Թմբկահար, մարտիկ ու պոետ:
 Երբ բացվեց հոգուս վաղորդայնը –
 Սիրեցի նվագները քո ես²³:

Նա ընդգծում է նմանությունները իր և Հայնեի ժամանակների միջև: Իր ժամանակին Հայնեն անդադար պայքարում էր պոեզիայի տենդենցիոզություն և կուսակցականության դեմ: Ոչ մեկն այնքան ուժ ու եռանդ չգործադրեց հեղափոխական ու քաղաքական գրականության համար մղվող պայքարում, որքան Հայնեն, թեև հավատացնում էր, թե ինքը պատկանում է վարդի և սոխակի կուսակցությանը: Չարենցը նույնպես, ինչպես Հայնեն, իր կյանքի ժամանակն անմնացորդ նվիրեց հեղափոխական գաղափարներին, և ինչքան նա ընդգծում էր իր նվիրվածությունը գաղափարին, այնքան բացահայտ էր դառնում իրեն սպասող կործանումը: Նույն բանաստեղծության մեջ նա շարունակում է.

Իսկ ապա , երբ ճամփիս ծաղիկները
 Փոխվեցին փշերի ու խոցի –
 Սիրեցի երկմիտ շշուկներդ
 Եվ հեգնանքդ, որ նման է բոցի:
 Ինչպես գու, – ես էլ աշխարհում այս
 – Ապրում եմ դարում հողմաշունչ,
 Եվ երգերս խնդուն , ես իրում եմ
 Հնի սիրտը, ինչպես մի դաշունյն.
 Ինչպես դու – ես էլ մտքերով իմ
 Ապրում եմ գալիքում դեռ չեկած,
 Եվ դնում եմ առաջ երգերով իմ՝
 Դեռ գլուխս ներքև չթեքած²⁴:

Այդ նույն ժամանակ իշխանության գլուխ էին կանգնած մարդիկ, որոնց նպատակն էր իրականացնել Ստալինի վերջնական ծրագիրը՝ ասսյալանացնել վերացնել «գլուխը ներքև չթեքողներին», ահաբեկել, ապագայնացնել ժողովրդին, անվստահություն սերմանել մարդկանց մեջ մթնոլորտը թունավորելով, զրսլարտանքներով ու մատնություններով: Եվ այնուամենայնիվ, դիմելով Հայնեին, նա գրում է.

Եվ գալիքը այն, որ Հայնե՛,
 Մի ցնորք էր հեռու քեզ համար,
 Շողշողում է, ինչպես վաղորդայնը,
 Եվ թնգում է շուրջս հիմա:
 Բայց էլի՛ իմ ուղին դժվար է
 Եվ նման է ուղուն քո վերին...
 Ինձ հետ է թեկուղ իմ դարը,
 Բայց իմ դեմ է մարդը դեռ հին: –
 Նա դեռ կա: – Այսօր էլ նա նստել է,
 Ինքնագոհ, կառչում է բույնին, –
 Եվ նա նո՛ւյնն է, նո՛ւյն Ֆիլիստերը՝
 Չնայած դիմակի դուլնին²⁵:

23 Ե. Չարենց. Եժ. հ. 3, էջ 233:

24 Նույն տեղում:

25 Նույն տեղում, էջ 234:

Ապշեցուցիչ է Չարենցի ոգու հավատի թուլիչքը: Շրջապատող նողկալի իրականության մեջ անգամ նրան չլքեց դեպի գալիքն ունեցած իր լուսավոր լավատեսությունը: «Հայնեին» բանաստեղծության մեջ Չարենցը, նորից գիմելով իր «հոգեհորը», ոգեշնչում է նրան, փորձում կապել իր ժամանակի հետ:

Օ, Հայնրիխ Հայնե,
Օ, Հայնրիխ Հայնե,—
Հնչում է քո ձայնը,
Կանչում է քո ձայնը,
Ինչպես վաղորդյանը...
Խիզախ թմբկահար դու,
.....

Մարտիկ ու պոետ,
Աշխարհը ու մարդը
Երգում էր քո հետ.
Գալիքն ու աշխարհը,
Դո օրն ու քո դարը—
Երկինքն օսար էր
Երգին քո հավետ...
Օ, Հայնրիխ Հայնե
Մարտիկ ու պոետ²⁶:—

Հոգեկան մերձեցումների պահերին Չարենցը հայտնագործեց իրենից մեկ գար առաջ ծնված գերմանացի բանաստեղծին, որոնց մեջ գտավ իր խոստովանահորն ու բախտակցին: Ցավոք, Հայնեն չկարողացավ իր կանխատեսումներով պաշտպանվել գրավիչ գազավարների տակ թաքնված չարանկեղծների վավերից, որին այնպես ողբերգականորեն զուհ գնաց Չարենցը:

«Հայնրիխ Հայնեն» և՛ խիզախ մերկացում է, և՛ ազնիվ տաղնապ, և՛ արյուն, և՛ տառապանք, և՛ հավատ, լուսավոր հավատ գալիքի նկատմամբ»²⁷, իրավացիորեն գրում է գրականագետ Հր.Թամրազյանը: Վերջին խոսքը նորից Չարենցին է, որը դիմելով Հայնեին՝ գրում է.

Իսկ խխունջն այն, որ նստել է
Տղրուկի նման մեր քթին.—
Նա կանցնի, ինչպես ստվերը,
Երբ արևը հասնի զենիթին:
Այո արևը, որ հար բարձրանում է,
Կխանձի նրան իր հրով.—
Բայց նրա ցուքերում մեր անունը:
Կհիշեն գգվանքով ու սիրով...²⁸

26 Նույն տեղում, էջ 237:

27 Հ. Թ. ամրազյան. Սովետական գրականության պատմություն, էջ 383:

28 Ե. Չարենց. Երկերի ժողովածու, հ. 3, էջ 236:

Մի առիթով Հայնեն գրել է. «Աշխարհը մի ժայռ է, որի վրա մարդկութունը որպես իսկական Պրոմեթևս, շղթայված ու կաշկանդված՝ հռչակում է կասկածի անգղից: Նա՛ մարդկութունը, լույսը զողացել է և դրա համար սարսափելի տանջանքներ է կրում»²⁹:

Հիրավի, ճիշտ է Հայնեն, քանի որ, կշռելով մարդկության ընտրյալներին՝ տվյալ դեպքում Հայնեի և Չարենցի տառապանքն ու վաստակը, չենք կարող չընդունել նրանց բերած «լույսի» մեծությունը, իսկ դա նշանակում է, որ նրանք ևս իրենց հերթին եղել են Պրոմեթևսներ:

ГЕНРИХ ГЕЙНЕ И ЕГИШЕ ЧАРЕНЦ,
ВРЕМЯ И МИРОВОСПРИЯТИЕ

НАЗЕЛИ МАРГАРЯН

Р е з ю м е

Генриха Гейне и Егише Чаренца разделяет век. Но в мировосприятии и ощущении времени двух больших поэтов много общего. Те течения и идеи, которые во времена Гейне только зарождались, созрели и расцвели спустя век, в период короткой жизни Егише Чаренца. Речь идет о коммунистической идеологии, которая в свое время приводила в ужас Гейне, и плоды которой сполна довелось вкусить Чаренцу. В статье проведены параллели между пророчеством Гейне и восприятием событий своей эпохи Чаренцем.

HEINRICH HEINE AND YEGHISHEH CHARENTS,
TIME AND PERCEPTION OF THE WORLD

NAZELI MARGARYAN

S u m m a r y

There is a century separating German famous poet Heinrich Heine and Armenian poet Yeghisheh Charents. But to our surprise, there are many common and similar features in the way of their time and world perception. Those streams and ideas, which were in a foetal phase of their appearance at the times of Heine, gave birth after a century, during a short life of Ye. Charents. The matter of subject was the communist ideology, which was frightful for Heine and Charents had to taste those fruits. Here are presented parallels between the prophecy of Heine and perception of Charents as a witness and poet of his time, and those projections, which were done by each of these great poets.

29) Լուսմա. Թիֆլիս, 1902թ., Հայնեի մաթերից, N3, էջ 259-260. Թարգ. Ա. Եղիպարի: